

## Կոտայքի մարզպետը կեսգիշերն անց այցելել է Արովյանի Բ/Կ

10.09.2018

Կոտայքի մարզպետ Ռոմանոս Պետրոսյանը կեսգիշերն անց անակնկալ այց է կատարել մարզային ենթակայության «Ռ.Հարությունյանի անվ. Արովյանի Բժշկական Կենտրոն» ՓԲԸ:

2 տարբեր վթարներից հիվանդանոց էին տեղափոխվել 8 քաղաքացիներ, ում ցուցաբերվել էին տարաբնույթ անհետաձգելի բժշկական օգնություն (հիմնականում սալջարդեր և ոսկրային կոտրվածքներ), և բոլորը սպասարկվել էին ՎՃԱՐՈՎԻ հիմունքներով (5.000-ից 23.000 ՀՀԴ):

«Պետք է հասկանալ, որտեղ է այն սահմանագիծը, որը բաժանում է վճարովի-համավճար- պետ.պատվեր ծառայությունները, և արդյոք մեր քաղաքացիներին հավուր պատշաճի իրազեկում են այդ դրույթների և դրանցից օգտվելու նրանց իրավունքների մասին, թե՞ մեր պետական բուժ.կենտրոնները զուտ «վերակազմավորվել են» շահույթ հետապնդող կոմերցիոն հաստատությունների: Համենայն դեպս, ինձ ներկայացրեցին 1000 պատճառ և գնացուցակ, թե ինչու են գումար գանձել տուժող քաղաքացիներից, սակայն չներկայացրեցին գեթ 1 իրավական ակտ, որով հնարավոր կլիներ վերջիններիցս գեթ մեկին սպասարկել պետ.պատվերի կամ համավճարի շրջանակներում», -իր ֆեյսբուքյան գրառման մեջ նշել է Ռոմանոս Պետրոսյանը:

Մարզպետը հայտնել է նաև, որ առաջիկայում հիմնավոր կզբաղվի իր իրավասության տակ գտնվող բժշկական հաստատությունների և առողջության առաջնային պահպանման կենտրոնների գործունեության կանոնակարգմամբ, որտեղ գերակա կլինի ՀՀ ՔԱՂԱՔԱՑՈՒ շահը:

«Իսկ մինչ այդ, կոչս մեր բոլոր Քաղաքացիներին. պահանջե՛ք ձեր բոլոր վճարումների դրամարկղային կտրոնները, որպեսզի ձեր մասով առնվազն կանխեք կոռուպցիոն ռիսկերն ու ստվերային շրջանառության հնարավորությունը բուժ.հաստատություններում», -ֆեյսբուքյան գրառումն այսպես է ամփոփել Կոտայքի մարզպետը: